

42



Հայ-Ռուսական համալսարանի  
ՀՀ ԲՈԿ-ի իրավագիտության  
063 մասնագիտական խորհրդին

( 0051, Հայաստանի Հանրապետություն,  
ք. Երևան, Հովսեփ Էմինի փողոց, թիվ 123)

24.05.2023

### ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Յուրիյ Վիտալիյի Հայրապետյանի՝ ԺԲ.00.04 <<Ռատական իրավունք, դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն>> մասնագիտությամբ Լուսինե Վոլոդյայի Սարգսյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման՝ «Հայցի ապահովման արդի հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական դատավարության իրավունքում» վերստառությամբ թեկնածուական ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Լ.Վ. Սարգսյանի ատենախոսությունը նվիրված է ժամանակակից քաղաքացիական դատավարագիտության կարևորագույն խնդիրներից մեկի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում հայցի ապահովման հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

Հայցի ապահովման ինստիտուտը ունի կարևոր նշանակություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում անրագրված

43



քաղաքացիական դատավարության հիմնական նպատակների իրականացման հարցում: Այս դատավարական ինստիտուտը նպաստում է քաղաքացիական դատավարությունում անձանց իրավունքների և օրինական շահերի իրական պաշտպանության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը: Այս տեսանկյունից, կարող ենք փաստել, որ հեղինակի կողմից ատենախոսական հետազոտության համար ընտրված թեման արդիական է, տեսականորեն և գործնականում նշանակալի:

Լ. Վ. Սարգսյանի ատենախոսությունը, ըստ էության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում հայցի ապահովման արդիական խնդիրների վերաբերյալ առաջին համալիր հետազոտությունն է:

Աշխատանքի հիմնական նպատակն է հայցի ապահովման դատավարական ինստիտուտի իրավական բնույթի համապարփակ վերլուծություն իրականացնելը, տեսական և գործնական խնդիրների հայտնաբերումը, այս ոլորտում օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործումը:

Հեղինակը աշխատանքում հետևողականորեն անդրադառնում է ՀՀ քաղաքացիական դատավարությունում հայցի ապահովման ինստիտուտի նշանակության և իրավական բնույթի վերաբերյալ հարցերին (Ատենախոսության Գլուխ 1, էջ 19-48):

Ատենախոսության մեջ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում հայցի ապահովման միջոցների կիրառման իրավական նախադրյալների ուսումնասիրությանը (Ատենախոսության Գլուխ 2, 49-130 էջ):

Ատենախոսական հետազոտության 3-րդ գլուխը նվիրված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում հայցի ապահովման առանձին միջոցների կիրառման հետ կապված խնդիրներին և դրանց առանձնահատկություններին (ատենախոսության 130-158 էջեր):


Ատենախոսական աշխատանքի հիմնական առավելություններն են՝ հեղինակի կողմից թեմային առնչվող խնդրահարույց հարցերի ճիշտ ընտրությունը, նշված հարցերի լուծմանն ուղղված անհատական մոտեցումներն ու առաջարկները, ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ տեսական գրականության, օրենսդրության և դատական պրակտիկայի վերլուծության ունակությունը, օրենսդրական կատարելագործման ուղղված նոր գիտական դրույթներ և առաջարկություններ ձևակերպելու ունակությունը:

Աշխատանքում առկա են բազմաթիվ արժեքավոր հետևություններ, մտահանգումներ և տեղեկություններ: Մասնավորապես, արդարացված է հեղինակի այն եզրակացությունը, որ

45  
44

հայցի ապահովման միջոցների կիրառումը պետք է լինի օրինական և հիմնավորված:  
Դատարանը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է մանրակրկիտ ուսումնասիրի հայցի  
ապահովման միջոցների կիրառման համար անհրաժեշտ նախադրյալների առկայությունը  
կամ բացակայությունը:

Արժեքավոր է այն դիտարկումը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում  
անհրաժեշտ է ունենալ այնպիսի իրավական կարգավորում, որը հնարավորություն  
կընձեռներ գործին մասնակցող անձին հայցի ապահովման միջոցների կիրառման  
միջնորդություն ներկայացնել ոչ միայն առաջին ատյանի դատարանում գործի քննության  
ընթացքում, այլև նաև դատարանի վճռի բողոքարկման փուլերում:



Հատուկ ուշադրության է արժանի հեղինակի եզրահանգումը հակընդդեմ ապահովման  
գործառույթների վերաբերյալ, որոնք ըստ հեղինակի երկուսն են՝ առաջին գործառույթը՝  
պաշտպանիչ է, իսկ երկրորդը՝ կանխարգելիչ:

Արժեքավոր է նաև հեղինակի այն դիտարկումը, որ հայկական իրավունքն արդեն 12-13-  
րդ դարերում պատկերացում է ունեցել հայցի ապահովման ինստիտուտի մասին:

Միևնույն ժամանակ, Լ. Վ. Սարգսյանի ատենախոսությունը, ինչպես և ցանկացած լուրջ  
գիտական հետազոտություն, պարունակում է որոշակի առանձին բանավիճային  
եզրակացություններ: Այսպես՝

1. Ուշադրության է արժանի հեղինակի մոտեցումը՝ ուղղված ՀՀ քաղաքացիական  
դատավարության օրենսգրքում նոր 127.1-րդ հոդվածի ամրագրմանը, որտեղ  
կտրվի հայցի ապահովման հասկացության իրավական սահմանումն, որն,  
անշուշտ, արտացոլում է հայցի ապահովման իրական առարկան՝ գործին  
մասնակցող անձի կյուրախրավական պահանջի ապահովումը՝ դատարանի  
կողմից ընդունված եզրափակիչ դատական ակտի կատարման ապահովման  
տեսքով (պաշտպանությանը ներկայացվող թիվ 1 թեզ): Այնուամենայնիվ, պետք է  
հստակ հասկանալ, թե ինչ նպատակ պետք է հետապնդի նշված օրենսդրական  
առաջարկը և որն է նման նորամուծության գործնական օգուտը: Հայցի  
ապահովումը սահմանող հատուկ հոդվածի բացակայությունը ՀՀ  
քաղաքացիական դատավարության օրենսգրքում դեռ չի նշանակում, որ այս  
դատավարական ինստիտուտի սահմանումը չի կարող բխել համեմատական  
վերլուծությունների և տրամաբանական եզրակացությունների միջոցով, որոնք  
բխում են այն իրավական նորմերի բովանդակությունից, որոնք տրված են հայտնի

ապահովման վերաբերյալ իրավական կարգավորումներ: Գտնում եմ, որ տեսական գրականությամբ և իրավական դոկտրինայում տրված «հայցի ապահովում» հասկացության սահմանումը արդեն իսկ բավարար է և լիարժեք, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում նման սահմանման ամրագրումը լրացուցիչ իմաստային բեռ է լինելու, ուստի նպատակահարմար չէ:

2. Վիճելի եմ համարում նաև հեղինակի հետևությունն այն մասին, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 4-րդ կետն ամբողջությամբ չի սահմանում հայցի ապահովման միջոցի կիրառման մերժման իրավական հիմքերը (պաշտպանության ներկայացվող թիվ 6 թեզ): Հեղինակը միանգամայն իրավացի է, երբ նշում է, որ հայցի ապահովման միջոցը պետք է համաչափ լինի ներկայացված պահանջին և հայցի ապահովմամբ հետապնդվող նպատակին (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 3-րդ մաս) և այդ սկզբունքի խախտումը պետք է հանգեցնի հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդության մերժմանը, սակայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 4-րդ կետը չի խախտում նշված սկզբունքը, ավելին՝ 131-րդ հոդվածում ամրագրված է հայցի ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդության քննարկման մանրամասն կարգը: Սահմանելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում հայցի ապահովման միջոցի կիրառումը վերացնելու համար հեղինակի առաջարկված երկու հիմքերը՝ օրենսդիրը կարող է արհեստականորեն սահմանափակել դատարանի իրավակիրառ գործունեությունը և ներքին համոզմամբ առաջնորդվելով որոշումներ կայացնելու հնարավորությունը: Ենթադրվում է, որ վերը նշված հիմքերի բացակայությունը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրության մեջ ավելի շուտ դրական, քան բացասական երևույթ է, քանի որ թույլ է տալիս դատավորին որոշում կայացնելիս հաշվի առնել յուրաքանչյուր կոնկրետ գործի առանձնահատկությունները:



3. Կասկած է հարուցում հեղինակի այն պնդումը, որ հակընդդեմ ապահովումը բնութագրող «հնարավոր վնասներ» հասկացությունը և հակընդդեմ ապահովման որոշակի գումարի չափի բացակայությունը կարող է հանգեցնել դատարանների մոտ տարբեր մոտեցումների առաջացմանը՝ հակընդդեմ ապահովման պահանջի վերաբերյալ միջնորդությունները

գնահատելիս(պաշտպանության ներկայացվող թիվ 9 թեզ): Գտնում եմ, որ «հնարավոր վնասներ» եզրույթի որոշակի նյութական չափի ամրագրումը պահանջում է մի շարք վավերապայմանների խորը ուսումնասիրության անհրաժեշտություն, առաջին հերթին, դատական պրակտիկայի մանրամասն ուսումնասիրություն՝ հստակ վիճակագրական տվյալների ներկայացում, ինչը թույլ կտա եզրակացնել, որ դատարանների մոտեցումները այս հարցի լուծման կապակցությամբ իսկապես տարբերվում են: Երկրորդ, հարց է առաջանում, ինչպես պետք է հաշվարկվի հնարավոր կորուստների չափը, ինչ սկզբունքներով պետք է առաջնորդվել այն որոշելիս, արդյոք այն պետք է կապված լինի հայցագնի հետ, թե ոչ, ինչպես պետք է այն ներկայացվի ոչ գույքային բնույթի պահանջների դեպքում: Նշվածի կապակցությամբ հեղինակի առաջարկը բավականին սուբյեկտիվ է և վիճելի: Երրորդը, գտնում եմ, որ հակընդդեմ ապահովման չափ սահմանելիս անհրաժեշտ է գնահատել նաև անձի կրած դատական ծախսերը, վճարված պետական տուրքը, որոնք ևս կարող են ազդել հնարավոր կորուստների չափի վրա: Հիմք ընդունելով նշված դիտարկումները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում հակընդդեմ ապահովման գումարի չափ ձևակերպելու նպատակահարմարությունը փոքր-ինչ ավելորդ է թվում:

Նշված դիտողությունները կրում են բանավիճային բնույթ և այնուամենայնիվ չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժանիքները:

Այսպիսով, գտնում եմ, որ Լուսինե Վոլոդյայի Սարգսյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման՝ «Հայցի ապահովման արդի հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական դատավարության իրավունքում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 08.08.1997թ.-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.04 «Դատական իրավունք, դատաբանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության

տեսություն»» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

44

Պաշտոնական ընդդիմախոս՝  
իրավագիտության թեկնածու, դոցենտ

Յու.Վ.Հայրապետյան

Յու.Վ. Հայրապետյանի ստորագրությունը  
հաստատում եմ՝  
Հայ-Ռուսական համալսարանի

Գիտական քարտուղար՝  
Բ.Գ.Թ



Ռ.Ս. Կասաբաբովա